

Քեզ յաւիտենական սիրով
սիրեցի: Երեմ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը կը որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ: Ես. 49:13
Քու խօսքդ իմ ոտքերուս
ճրագ է: Սաղ. 105

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԿՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Համարում իմը պիտի գիտա-
նաք, ու ան համարում իմը
ձեզ պիտի ազատէ: Յով. 8:32
Ուրեմն Բրիտանիոյ կողմանէ
դեսպանութիւն կ'ընենք, . . .
կ'աղաքենք ձեզի Բրիտանիոյ
կողմանէ, հաշտուեցէք Աս-
տուծոյ հետ: Բ. Կորնթ. Ե. 20

“PANPÈRE” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժանորդագին տարկ.— Ֆրանսա եւ յուրիա 4, Պալքանեան երկիրներ 5 ֆր. ուրիշ երկիրներ 1,50 ֆր.

Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 10

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՈՒՄ 1926

ԽՈՂՆԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

(Pasteur Henri Birmele — Soultzern, Alsace*)

«Ձեզմէ մի ձգէք ձեր վստահութիւնը, որ ան
մեծ վարձքի հատուցում ունի»։ Եբր. Ժ:35

Նոր տարուան մը սկիզբն ենք: 1926 տարին
սկսաւ: Ի՞նչ պիտի բերէ ան: Պարագանքը ի՞նչ-
պէս պիտի ըլլան, երբ երեք հարիւր վաթսուներ
հինգ օրերը անցնին: Մենք ի՞նչ պիտի ըլլանք: Դուք
հայ գաղթական եւ հայրենագուրկ ժողովուրդդ,
ի՞նչ պիտի ըլլաք: Իրենց սէգ գլուխը դեռ հպար-
տութեամբ բարձրացնող այսօրուան ազգերը ի՞նչ
պիտի ըլլան: Ո՛ւր պիտի ըլլա՞նք: Տակաւին ողջ
պիտի մնա՞նք:

Եւ ո՞վ կարող է այս հարցմանց պատասխանել:
Մաղթանքներ կրնանք ընել իրարու, — ու մարդիկ
նոր տարուան շատ մը բաներ կը մաղթեն — Բայց
այդ մաղթանքները հաւանաբար կատարուին ու
թերեւս ո՛չ: Կարող է՞նք նոր նոր ենթադրութիւն-
ներ ընել եւ ծրագիրներ շինել, բայց մէկը չգիտեր
եւ չկրնար ըսել թէ անոնք պիտի իրականանան:
Կարող ենք նաեւ այս կամ այն խնդրոյ մասին
կասկածներ յայտնել, հոգեր ընել: Թերեւս այդ
կասկածները իրականանան կամ նաեւ ո՛չ: Վեր-
ջապէս, աշխարհի մէջ ու եւ մարդ ունէ ո՞ր ո՞չ
բան չգիտեր: Ապագան, նոր տարին մոլ-
թիւն մէջ ծուարուած է:

Սակայն անորոշ քայլեր չնետենք: Եթէ մառա-
խուղի մէջէ ալ անցնինք, եթէ մեր աչքերով արեւը
չտեսնենք, այսու հանդերձ մեր ոտքերուն հաս-

տատուն հիմեր շինենք, գիտնալով թէ մառախու-
ղէն վեր արեւը նոյն զօրութեամբ կը փայլի: Ու
մենք կարող ենք՝ եւ առանձնաշնորհուած ենք ու-
նենալ այդ հաստատուն հիմը: Մեր խորագիրը
զայս կը յիշեցնէ մեզ. «Ձեզմէ մի՛ ձգէք ձեր վստա-
հութիւնը որ ան մեծ վարձքի հատուցում ունի»:

Արդ, ի՞նչ բան ձգելու չենք: Վստահութիւնը
երկնային Հօր Աստուծոյն հանդէպ մեր վստահու-
թիւնը: Ի՞նչ զարմանալի պատկեր մը կը ներկայա-
նայ մեր առջեւ, երբ մեր զաւակներէն մին բարձր
տեղ մը կայնեցնելով՝ անոր առջեւ կը կենանք
ու կ'ըսենք որ դէպի մեզ ցատկէ, ու պզտիկը ա-
ռանց վախնալու ինքզինքը վար կը ձգէ դէպի մեր
բազուկները: Այդ պահուն վախի գաղափարն իսկ
չօշափեր իր միտքը: Հայրը յաճախ զայն իր բա-
զուկներուն վրայ կրած է. ինք փորձառու եղած
է թէ այդ բազուկներուն մէջ միայն հանգիստ կայ,
հոն ո՛չ երկիւղ, ո՛չ հոգ գոյութիւն ունի: Այս է
վստահութիւնը: Երկնաւոր Հայրն Աստուած
այսպէս իր բազուկներուն մէջ կրած է՝ մեզ, նոյն-
իսկ յաճախ կրակներու մէջէն: Սիրոյ թեւերուն
մէջ առնելով մխիթարած է՝ զմեզ մեր դժնդակ
պահերուն, ու մենք իր ներկայութիւնը զգալով
չլսեցի՞նք իր քաղցրահնչիւն մխիթարական ձայնն
«Իմ շնորհքս հերիք է քեզի»: Ահա իրեն
վստահելու պատճառ մը:

Երբ նոր տարուան նայինք Անոր, որ նոյնն
է երէկ ու այսօր եւ յաւիտեանս, Յիսուսի Բրիտա-
նի, Աստուծոյ որդւոյն, զոր երկնաւոր Հայրը իր
սիրով մեզի՝ կորսուած զաւակներուս համար
ղրկեց ու զայն մահուան մատնեց՝ մինչեւ խաչին
մահուան, այսպիսի սիրոյ մը վստահելու բաւակա-
նաչափ պատճառ չունի՞նք: Երբ մեր մեղքը տես-
նելով զղջանք ու երբ այդ մեղքը օրէնքին ու Աժ-

(1) Փաստօր Պիրմըր Ալզասի մեծ հայասերներէն մին է,
նոյնպէս անդամ Action Chrétienne en Orientի քովի մէկն,
որուն այս կարճ յօդուածը կը յուսանք շատերու օգտակար
պիտի ըլլայ: ԾՆԹ. ԽՄԲԻՐ.

տուժոյ դատաստանին առջեւ մեզի ըսել տայ. «Աւարժանի չեմ քու որդիդ ըսուելու», մենք դարձեալ կը լսենք նոր ուրախալի աւետիսը «Գուք չէ՛՝ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրերէն աւանդուած ունայն ճամբաներէն, հապա քրիստոսի պատուական արիւնովը՝ որպէս թէ անբիծ ու անարատ գառի մը»: Ահա հոս ալ իրեն վստահելու պատճառ չունի՞նք միթէ:

Այն ատեն տարիներն ու ժամանակները կըրնան գալու երթալ, անոնց հետ մենք ալ կրնանք ծերանալ, ու եթէ ժամանակի ընթացքին մէջ աշխարհի իր բոլոր հանոյքներովն ու խոստումներովը մեզի հետզհետէ հեղհեղուկ երեւի, ու երբ երկրային բոլոր յոյսերը խաբուսիկ ըլլան, ա՛լ աւելի ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ հաստատ պահենք երկնաւոր Հօրը վրայ դրած մեր յոյսը: Զեր յոյսը մի՛ ձգէք:

Բայց մէկդի ձգենք ամէն ինչ որ մեր յոյսին արգելք կը հանդիսանայ: Երբ յոյսը ազնուացած ծառ մըն է որ հաւատարմաբար ինամուտեւ է, որպէս զի ցովնանի հիւղակը հովաւնաւորող դռմենիին նման չըլլայ: Թր մըն ալ երբ արեւին կիզիչ ճառագայթները կ'այրէին ցովնանի դէմքը, ունա շուքին տակ ապաստանիլ կ'ուզէր, ահա դռմենիին բոլոր տերեւները չորցած էին, ցողունն ալ թարշամած. վասն զի որդ մը կրծած էր անոր արմատը:

Շատ մը վստահութիւններ կան, որ տաքութեան ու նեղութեան չեն դիմանար, վասն զի իրենց արմատը կրծուած է, կրծուած անձնական ոյժերու եւ խելքի ու կեղծ յոյսերու կողմէ: Ատոր համար Աստուծոյ խօսքը յատկապէս կ'զգուշացնէ զմեզ հետեւեալ պատգամով. «Իմաստունը իր իմաստութեամբը չպարծի, ու զօրաւորը իր զօրութեամբը չպարծի, հարուստը իր հարստութեամբը չպարծի»:

Աստուծոյ վստահելու հակառակ՝ ուրիշ վնասակար որդ մըն ալ իր բարեպաշտութեան ու բարի վարքին վստահիլն է: «Ես ալէկ մարդ մըն եմ, ինչ որ Աստուծոյն է Աստուծոյ կուտամ, ու պատճառ մը չկայ երանութեան չհասնելու»: Բայց երբ իր անկալածներուն հակառակ բան մը պատահի, կ'ըսէ. «Ես ի՞նչ ըրի որ այս բանը հանդիպեցաւ ինձ»: Ո՛հ, Սիրելիներ, Աստուծոյ առջեւ՝ անձնական առաւելութեանց ու գովելի արժանիքներու վրայ ձեր ունեցած յոյսը մէկդի ձգեցէք: Երբայն առ Աստուած վստահութիւնը հաստատուն կը մնայ, այն վստահութիւնը որ միշտ ու միայն Աստուծոյ շնորհաց վրայ հաստատուած է: Երբայն Աստուծոյ շնորհաց վրայ եւ ո՛չ ուրիշ բանի:

Այսպիսի վստահութիւն մը մեծ վարձք ունի: Սա ո՛չ թէ հատեալ ստակ է, նեղ օրերու մէջ երկիւղով դուրս հանուելու համար, այլ յարատեւ խրախուսեալ արիւնթիւն մը, որով մենք ամէն օր նոր կորովով մեր գործը ձեռք կ'առնենք, մեր պանդըխտութեան ուղին կը շարունակենք, մեր առջեւ դրուած պայքարը կը պայքարինք եւ յաղթութիւնը կը շահինք. վասն զի ամէն օր ամէն ժամ ինքզինքը ճերջը ձեռքին մէջ գիտնալ, սրտի ուրախութիւն եւ խաղաղութիւն կուտայ եւ փոթորիկներու մէջ անվրդով կը պահէ: Հոս մեծ վարձատրութիւն մը չէ՛ս տեսներ: Ու վերջապէս երբ որ վերջին տարին, վերջին օրը, վերջին վայրկեանը գայ, Աստուծոյ վստահող մընոյն պահուն իր բաղդը աշխարհի թագաւորներու փառքին հետ չպիտի ուզէ փոխել:

Ուստի այս նոր տարուան բոլոր օրերուն մէջ հոգ տարէք որ ձեր վստահութիւնը առ Աստուած աւելի զօրաւոր ըլլայ եւ ձեր սիրտը ամէն օր նոյն նշանաբանը հաստատ բռնէ. «Զեզմէ մի՛ ձգէք ձեր վստահութիւնը, որ ան մեծ վարձքի հատուցում ունի»:

ԲԱՆԲԵՐԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ

Բարին ու չարը ահագին պատերազմի մը մէջ են. պատերազմի դաշտը աշխարհս է եւ բանակներն անոր բնակչութիւնը:

Ամէն ոք, գիտակից կամ անգիտակից, կը մասնակցի այս ամենի պատերազմին, եւ չկայ ոեւէ մէկը որ չէզոք մնայ:

Այս պատերազմը ընդարձակ ըլլալով՝ բաժնուած է զանազան ճակատներու, ասոնցմէ մին է հրատարակութեանց Ռազմաճակատը:

Եթէ բաղդատենք «Բարի» եւ «Չար» ազդեցութիւն ընող հրատարակութիւնները, պիտի գտնենք թէ անոնցմէ բարիին ծառայողները որքան հազուադէպ են:

Ուստի նկատելով այս դառն իրողութիւնը, ամէն բարի ռազմիկ իր ամենակարելին ընելու է «Բաներ»ներու սպառումին եւ անոր նման հոգեւոր թերթերու հրատարակութեան համար:


Ա՛րդ Բարի Ռազմիկ միշտ պատերազմէ, Տես Փրկիչը ինչ կ'ըսասէ քեզմէ.
«Կարդայ ու ցրուէ օգտաշատ «Բաներ»
Այս ճակատին մէջ քու բաժնիդ բեր»:

Թէեւ Չարերը առ այժմ յաջող են, Կայտառ, եռանդուն միշտ ուրախ կ'երգեն, Սակայն, եւ անոնց երգն ու խնդուածին խիստ վաղանցուկ է եւ չէ մնացուն:

Ուստի միշտ գրէ ու միշտ պայքարէ, Քանզի այս կեանքը լոկ մի պայքար է. Ցառաջ խիզախէ, ցրուէ թշնամին, Քանզի անպատճառ յաղթողն է «Բարին»:

Պէտրոս, 6 Օգոստ. 1925

Ա. Մ. Պէճիրկեանեան



ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿԶ

(Շարունակութիւն 59րդ էջէն)

Ս Ա Տ Ո Ւ Թ Ի Պ Է Թ Ի Մ Է Զ

Վտանգներ խաւար թիպէթի մէջ.— Հիմալայայի ստորոտը՝ Մէմլայի հիւսիսային կողմը կը գտնուին Բամիուր, Գուլու, Չէնկի եւ Փոյ քաղաքները, որոնք ծովուն մակերեսէն 2400-3300 մէթր բարձր դիրքեր ունին :

Հնդկաստանի ամենահիւսիսային բարձրերը, թիպէթի սահմանապոլսին վրայ կը գտնուի Փոյ ուր 2 Գերման Հէննհոլթի միսիոնարներ՝ Մարքս եւ Քունիք ծաղկեալ գործունէութիւն մը ունէին: Սունտար իր թիպէթեան առաջին ճամբորդութեան այս քաղաքը եկաւ եւ շարաթ մը վերոյիշեալ միսիոնարներուն քով մնալով, անոնցմէ սովորեցաւ տեղւոյն բնիկ լեզուի մասին կարգ մը պիտելիքներ :

Միսիոնարները, որոնք արդէն կը ճանչնային իրեն սպասող բոլոր արհաւրալի վտանգները, պատրաստեցին զայն հանդէպ անոնց: Երբ Սունտար կը բաժնուէր անձնուէր միսիոնարներէն, օգնական առաջնորդ մըն ալ կ'ընդունէր, որուն հետ նա երկու ամիս ճամբորդելէ վերջ, առանձին մտաւ թիպէթեան անանցանելի փակ դռնէն ներս: թիպէթ աշխարհի մէջ օտարներու հանդէպ ամենաթշնամական դիրք բռնող եւ բացարձակ քահանայապետական ըլլալով, անմատչելի երկիր մըն է մինչեւ հիմա :

Ամենապիտան կրօնապետը, որ կը գտնուի Լասասայի մօտ՝ Փօթալա վանքին մէջ, Տէլէյլամա, Պուտտայի հոգւոյն մարմնացումը կը համարուի: Ասոր մեռնելէն վերջը, իր պաշտօնն ու տիրութիւնը իր տեղը բարձրացող քահանային կը տրուի :

Թիպէթի Պուտտայականութիւնը, կրնանք ըսել թէ կրօնքէ աւելի աւելորդապաշտութիւն է. նոյնիսկ աղօթքը խարէանկար մըն է, որ յաճախ ընդհանրէն իսկ չհասկցուիր եւ «Օմ մանէ փատմէ հում» տոմսակներու վրայ գրուելով՝ հողմաղացներու եւ շրաղօրիքներու անիփն վրայ կը փակցուին, այնպէս որ մարդկային շրթունքները զանոնք կրկնելու յոգնութեան իսկ պէտք չունին, այդ անիւները իրենց գործը կը տեսնեն :

Ճշմարիտ հաւատքի ամենամեծ թշնամիներն են անհաւատութիւն եւ աւելորդապաշտութիւն: Իսկ թիպէթի Պուտտայականութիւնը այս երկուքին միջինը ըլլալ կը կարծուի: Ամէն պարագայի տակ աւելի ազատ եւ քրիստոնէութեան համար ո՛չ անմատչելի ուղղութիւն մը մուտ գտած է Անգլիոյ հովանաւորութեան տակ գտնուող թիպէթի

արեւմտեան մասին եւ անոր կից երկիրներու մէջ: Սատուն գիտէր ասիկա :

Երբ որ նա 400 ենթալամներու վրայ հսկող զլխաւոր Լամայի մը թէմը՝ Թալիքանի եկաւ, հոն լաւ ասպնջականութիւն գտաւ, կերակրուեցաւ եւ նոյնիսկ հրաւիրուեցաւ քարոզելու ալ: Լամայի կողմէ կանչուած հոծ բազմութիւն մը ականջ կտրած մտիկ կ'ընէր Սատուի կողմէ քարոզուած նոր վարդապետութիւնը, զոր նոյնիսկ ընդունելու համար շատեր ոտքի ելած նշան տուին: Լաման մի քանի օր վերջը լաւ յանձնարարականով մը իր աստիճանը ունեցող ուրիշ Լամայի մը զրկեց զայն: Սա ալ մեծ պատիւներով ընդունեց Սատուն՝ ըսելով թէ իրենց մէջ առաջին քարոզող միսիոնարը եղած չէ՝ նա: Թէ ատկէ քանի մը տարիներ առաջ ուրիշ միսիոնարներ գալով քարոզած էին հոն, մի քանի անձեր ալ քրիստոնէայ եկած էին անոնց միջոցաւ, բայց գործը առաջ տարուած չէր: Սատու որքան հաստատուն գետին գտնէր, այնքան քաջալերուած առաջ կը նետուէր դէպի ներքին գաւառներ, ուր սակայն իր ճամբորդութիւնը յաւէտ չարչարանք մը եղաւ, հոն վտանգներ վտանգներու յաջորդեցին, ու սակայն անոնց կը հետեւէին միշտ աստուածային զարմանալի պահպանումներ: Այս դէպքերէն միայն երկուքը կ'ուզեմ մէջ բերել :

Երբ Սունտար թիպէթի աւելի ներքին գաւառները մխրճուած, Բասարի մէջ կը քարոզէր, կարգ մը մարդիկ յարձակելով իր վրայ, տարին տեղւոյն Լամային ներկայացուցին զայն, ամբաստանելով թէ առանց թոյլտուութեան իրենց երկիրը ստք կոխած, հոն նոր վարդապետութիւն մը կը քարոզէր: Այս կրկնակի քրէական յանցանքները բաւականաչափ պատճառներ էին զինքը անմիջապէս մահուան դատապարտելու: Մահուան պատիժը այդ երկրին մէջ երկու տեսակ էր. ա) դատապարտեալը նոր մորթուած եզի մը մորթին մէջ ուժգին մը փաթթելով կը կարէին, ու զայն արեւին տակը կը դնէին: Մորթը արեւին ազդեցութեան տակ չորնալով հետզհետէ կը կըծկուէր: Իսկ դատապարտեալին ոսկորները մէկիկ մէկիկ փշուրէլէ յետոյ՝ տաժանելի չարչարանքներով խեղդամահ կ'ըլլար ան: Երկրորդ մահապատիժը, նոյնքան անոքի, կը կայանար անո՞վ որ անջուր եւ նեխած գուբի մը մէջ կը նետէին, ուր նա մահուան պիտի սպասէր: Սունտարի համար այս վերջին պատիժը որոշուեցաւ: Գուբին յօրանջող բերանը կը բացուէր ու անպաշտպան երիտասարդը վար կը նետուէր, ուր նա ինկաւ նեխած մարդկային ոսկորներու վրայ, աջ թեւէն կոտրած: Սունտար վեր նայեցաւ ու տեսաւ որ գուբին կափարիչը կը զոցուէր անապին ճոնչուով: Սունտար կենդանի թաղուած մըն էր: Դի-

ակներու զարշէլի հոտը նոյնքան աւելի անտա-
նելի էր իրեն որքան այն զիտակցութիւնը թէ
ը եւ է մարդկային օգնութիւն կարելի չէր, եւ մի-
այն մահն էր իրեն սպասողը :

Սունտար, իր կեանքի վախճանը աչքին առ-
ջեւ, յաւիտենականութեան համար կը պատրաս-
տէր ինքզինքը: Ժամեր կ'անցնէին, Սունտար ա'լ
չէր զգար, անոր համար ժամանակը գոյութիւն
չունէր այլեւս: Երբորդ գիշերն էր, եւ նա կ'զգար
մահուան ցուրտ շունչն իրեն ճակատին, եւ սկսաւ
ա'լ աւելի ջերմեանդ աղօթքով ինքզինքը հոգի-
ներուն հօրը յանձնել: Ծիշդ այդ պարագային յան-
կարծ վերէն գուրին կափարիչը կը բացուէր, ու
հաստատուն շեշտով մարդկային ձայն մը կ'ըսէր
իրեն. «Սնտու, սա պարանը բռնէ որ վեր ելնես»: Սա-
տու իր կիսկատար ուժերը հաւաքած՝ այդ հը-
րամանին կը հնազանդի, եւ կը զգայ թէ իսկապէս
վեր կը քաշուի: Այժմ վերն է գուրին բերանը եւ
ժամերէ ի վեր առաջին անգամն ըլլալով թարմ
օդ կը քաշէ իր թոքերը՝ կազդուրուելու համար:
Նա զգաց թէ կափարիչը կը գոցուէր եւ ձեռք մը
իր կոտրած թեւին կը դպչէր: Երախտագիտական
զգացումէն արթննալով, երբ ետին կը դառնար
իր ազատիչին շնորհակալութիւն յայտնելու հա-
մար, Սունտար մէկը չգտաւ հոն, իսկ իր թեւն ալ
առողջացած էր: Պատանին քաշկոտուելով ամե-
նամօտ պանդուկը գնաց ու հոն գիշերուան մնա-
ցած ժամերը անցուց: Քանի մը օր վերջը կազ-
դուրուած՝ դարձեալ սկսաւ քարոզել: Ժողովուրդը
ալ աւելի զարմացած զինքը Լամային քով առաջ-
նորդեց: Ամբողջ քաղաքը իրարանցումի մէջ ին-
կաւ: Մեռեալ կարծուածը կ'ապրէր եւ դարձեալ
նոյն բանը կը քարոզէր: Լաման բարկութենէն
փրփրեցաւ: Գուրին միակ բանալին իր քովէն ո'վ
գողցած ըլլալու էր, նա պէտք էր տուէր իր մա-
հովը...: Բայց բանալին բուն իսկ Լամային զօ-
տիին մէջ գտնուեցաւ: Լաման, գունատ, երկիւ-
ղալի եւ սարսափահար կը խնդրէ Սունտարէն ան-
միջապէս հեռանալ քաղաքէն, մի գուցէ Սատուի
Աստուածը իր վրայ մեծ հարուած մը զրկէր:

*
* *

Թիպէթի ուրիշ գիւղ մըն ալ մտնելու ի գուր
ջանացած էր Սունտար, այնպէս որ գիւղացիներու
թշնամական դիրքին տեղի տալով, պարիս-
պէն դուրս քարայրի մը մէջ գիշերել ստիպուե-
ցաւ: Իրիկունը, հազիւ թէ արեւը մարը մտած
էր, Սունտար յանկարծ նշմարեց որ պարիսպին
դռնէն ահազին բազմութիւն մը դուրս կ'ելնէր
բերքերով ու լախտերով՝ եւ դէպի իրեն կուգար:
Սունտար հասկցաւ թէ յարձակում պիտի կրէր,
ուստի իր հոգին կը պատրաստէր Տէրջը ձեռքը
աւանդելու: Խուժըր մասերու բաժնուեցաւ, մար-
դիկ կ'ուզէին նախ քարայրը շրջապատել որպէս

զի աւելի վստահ ըլլային իրենց որսը ձեռք ձգե-
լու: Սունտար կ'աղօթէր: Յանկարծ ժողովուրդին
մէջ անօրինակ բան մը կը պատահէր, ամէն մէկը
իր տեղէն աւելի առաջ չկրնալով դալ, սկսան ետ
ետ երթալ եւ իրարու դէմ հակաճառել: Ահագին
աղմուկէն Սատու դուրս ելաւ հասկնալու թէ ինչ
կ'ուզէին: Վերջապէս մի քանի հոգի խօսք հաս-
կցուելու աստիճան մօտ գալով հարցուցին իրեն.
«Ուսէ՛ մեզի, քու քովդ կեցող այդ փայլուն հան-
դերձներով մարդը ո'վ է, նաեւ անոնք որ զքեզ կը
շրջապատեն»: Սունտար քաջաբար իր առանձին
ըլլալը յայտարարեց, վասնզի ինքը չէր տեսներ:
Մարդիկը կը պնդէին թէ քարայրին բերանը կայ-
նող ճեղմակ հանդերձներ հագած մեծ բազմութիւն
մը կը գտնուէր: Այս խօսակցութեանց արդիւնքը
սա եղաւ որ Սատուի անվտանգ մէկն ըլլալը հաս-
կնալով, անոնք խնդրեցին իրմէ իրենց հետ դալ
եւ պատմել այն Աստուծոյն վրայ որ իրեն հետե-
ւողները կը պահպանէ հրեշտակներուն միջոցաւ:
(Շարունակելի) Թ. Ն. Ղ.

ՅԱՆՁՆՈՒՆԷ ՅԻՍՈՒՍԻ

Ո'վ մարդ, Տէրն ըրէ գորութեանդ աղբիւր
Ան քեզ պիտի տայ բարեքներ բեր,
Քու փրկիչդ է որ բեր վիշտերէ
Քեզ պիտի փրկէ ու բեռըդ կրէ:

Երբ ցորեկդ՝ է հանդոյն գիշերուան
Քու փրկիչդ է լոյսը անմահ,
Անոր արեւը խաւարում չունի
Ուր Յիսուս կայ, հոն լոյս կայ Անհունի:

Թէեւ գտնուի մէզին մութին մէջ
Յիշէ չօրըդ սէր որ փայլի անշէջ,
Կամ երբ կը վառեն, սիրտդ շողեր տաք
Շուր մը կայ անուշ, Փրկիչիդ Խաչին տակ:

Երբ մարդոց առջեւ ես միշտ աննկատ
Ու չեն ճանչնար քեզ իբր մի անհատ,
Մի յուսահատի'ր չօրըդ մէջ սրտին
Քեզի տեղ մը կայ շքեղ թանկագին:

Երբ հոգեր, վիշտեր պատեն քու չորս դին
Երբէք մի՛ նայիր անդին ու ասդին,
Աշխարհք, բարեկամք՝ քու դառն վիշտերուն
Չունին երբէք քեզ դարման մնայուն:

Փրկիչիդ բաց սիրտըդ միթիւն սւ խաւար
Հոգ չէ թէ մեղքեր կան հոն անհամար,
Փրկիչդ Յիսուս բաց բազուկով միշտ,
Կ'սպասէ որ տայ քեզ սիրտ մը անվիշտ:

Մ. Ա. Թ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Մարտի, 18 Մայիս 1925

ԵՕԼԼԱՐԸՆԸ ՐԱՊՊԱ ՀԵՎԱԼԷ ԷՅԼԷ

Մեզ: 37: 5.

Պէօյիւք պիր ինայէթ տէյիլ մի քի պիզ ճիւմլէ զէմինի եօլլարմըզը էնտիշէլէրիմիզի վէ գայդուլարմըզը Ալլահըմըզա թէսլիմ էտէ պիւրիւրի, էյէր պիզ պու էօմրիւն ճիւմլէ կիւճ- լիւքէրինի էլէմլէրինի վէ էնտիշէլէրինի քէն- տիմիզ թաշըրպ ճէնքէշմէքլիյէ մէճպուր օլ- սա իտիք հալիմիդ նէ գատար փէրուշան օլա- ճագ իտի: Պու էօմրիւն ճիհատընտա չօք տէֆա եէրէ սէրիլէճէք իտիք. լաքին էօմրիւն ճիւմլէ քէտէրլէրինի Ալլահա թէսլիմ էտէպիլմէք վէ էմին օլմագ քի օ պիզէ եարտըմ էտէճէք, պիզի գայրաճագ, պիզի զէմինի եօլլարմըզտա իհ- տա էտէճէք վէ տիւզէլտէճէք՝ շիւպհէսիզ պու պէօյիւք պիր ինայէթ տիր:

Պու իքի քիւշիւք լուղէթլէր նէ պէօյիւք շէյլէրի շամիլ տիր: Պիզիմ շախսըմըզ իշիւն օլան էնտիշէլէրիմիզ, էվլատլարմըզ իշիւն օլան գայդուլարմըզ, տօսթլարմըզ վէ ազրա- պալարմըզ իշիւն, իշիմիզ վէ գազանճըմըզ իշիւն, եէլէճէլիմիզ վէ կիյինէճէլիմիզ իշիւն, եաշայաճաղըմըզ խանէ իշիւն վէ տահա պու զէմինի էօմրիւմիզէ աիտ օլան ճիւմլէ էնտի- շէլէր. պու իքի լուղէթլին իշինէ տիւշէրլէր: Լաքին Ալլահա շիւքը օլսուէն քի պիզի էզէն վէ իւզէրիմիզէ պասան հէր շէյի խէլասքեա- բըմըզըն աշաղընա գօյապիլիւրիզ: Բուճանի վէ ճիսմանի, պէօյիւք վէ քիւշիւք, շախսըմըզ վէ պաշգալար իշիւն լազըմ օլանը անտէն տի- լէյէպիլիւրիզ: Պիզիմ էօմրիւմիւզտէ հիշ պիր շէյ եօզ տըր քի խէլասքեաբըմըզ ինտինտէ օլ գա- տար քիւշիւք վէ էհէմմիլէթսիզ կէօրիւնսիւն քի, անըն իշիւն գայդուլ էթմէսին: Պիր տին- տար գարը պիր տէֆա շէօյլէ տէտի, պիր իյ- նէմի պիլէ դայպ էտիպ պուլամատըղըմտա անը խէլասքեաբըմա սէօյլէտիմ:

Իմտի, էյ սէվկիւլիւ տօսթուլ, պու ալէթէ շիմտիտէն սօնկրա ճիտտի պիր մանատա ինա- նարագ գապուլ էյլէ, պէլքի հէման շիմտի իւ- զէրինէ պասան վէ սէնի մահսուէն էտէն պիր մէսէլէ վար, օ էնտիշէնի Րապպա թէսլիմ էթ, վէ սէնին իւզէրինէ միւսթագպէլտէ կէլէճէք օ- լան հէր գայդուլու պէօյլէ Րապպա թէքք էյլէ- հիշ պիր էնտիշէյէ միւսատա էթմէ քի իւզէ- րինէ աղըրաշսըն, սէնի էզսին վէ սանա էլէմ վէրսին, իլլա հէր շէյի Ալլահըն հէր շէյէ գա- տիր օլան էլինէ թէսլիմ էյլէ, զիրա Օ պիզէ հէր շէյի էյի եափաճաղընը վատ էյլէտի: Նէ

գատար չօք տէֆա էնտիշէ էտէրէք, քէնտի քէն- տիմիզէ պիհուտէ եէրէ գահմէթ վէրիւրիզ, պիզ քէնտիմիզէ եարտըմ էթմէյէ չալըշըրըզ քէն- տիմիզի գայրըմագ իսթէրիզ, հագսըզըղա ուղ- րատըղըմըզտա քէնտիմիզ իշիւն ճէնք էթսէք իսթէրիզ, «Լաքին Րապպ սիզին իշիւն ճէնք էտէճէք վէ սիզ սիւքիւթ էտէճէքսինիզ», խուր. 14:14:

Պիր քիմսէ շէօյլէ տէտի Անա թէսլիմ օլու- նան հէր շէյ իշիւն Ալլահ մէսուլիյէթի քէնտի իւզէրինէ ալըր. իմտի պիզ տախի հէր շէյի Անըն էլինէ թէսլիմ էթմէյի էօյրէնէլիմ: Վէ Օ հէր շէյի եափաճագ տըր: Պիւթիւն գալպտէն Րապպա կիւվէն: Պազլըր Ֆօլքս Պօթէտէն Թէրճէմէ

ԵՅՆԻ ՍԷՆԷ ԹԷՖԷԲԻԻԻԻԻ

Կիւնլէրիմ Ֆիւլաի մէքիյիստէն
չապուգ կէշէրլէր: Յօր 7: 6

Իշթէ եէնի սէնէ կէլտի, պիր սէնէ տահա կէշիպ կիթտի, լաքին նէ՝ չապուգ կէշտի: Կէշիւրտիյիմիզ սէնէ վէ սէնէլէրէ տէօնիւպ պագտըղըմըզտա, պիզ տէ Ալլահ ատէմի Մոմսէս իլէ տէմէյէ մէճպուր օլույօրուզ «Սէնէլէրիմիզի խայալ կիպի կէշիւր իզ» վէ Յօր Մարգարէ իլէ պիզ տէ թէքէրիւր է- տէրիզ կիւնլէրիմիզ ճիւլահ մէքիյիստէն չապուգ կէշէրլէր: Խուսուսա շու սօն սէնէ նասըլ խայալ կիպի կէշտի, վէ անըն կիւնլէրի ճիւլահըն մէքի- յիստէն նէ գատար չապուգ կէշիպ կիթտիլէր, ար- թըզ կէրի տէօնմէմէք իւզըն:

Լաքին ճիւլահըն մէքիյի նէ գատար տա չա- պուգ կէշտէ, պօշուէնա կէշմէզ, օ կէշտիյի եէրտէ տիրէզիստէ պիր էսէր պրազըր: Պիզիմ կիւնլէ- րիմիզ վէ սէնէլէրիմիզ տախի մէքիյիստէն չապուգ կէշիպ կիտէրլէր, լաքին հայաթըմըզտա, սիյրէ- թիմիզտէ պիր էսէր պրազըրլար, պիր իշ կէօ- րիւրլէր:

Ջէր ատէմ, ալիմ վէ ճահիլ, զէնկին վէ ֆագիր, էրքէք վէ գարը. ճիւմլէմիզ պիւա իսթիսնա պիր կէօրիւնմէզ ֆապրիզաթօրուէն իշճիլէրի, ճիւլահ- լարը իզ, պիզ ֆարզընտա օլսագ վէ եա օլմասագ ֆարզ էթմէզ, էօմրիւմիւզիւն մէքիյի հայաթըմը- զըն ալթուէն թէլլէրի, տիրէզիստէն իշիստէն չա- պուգ, չապուգ կէշէրէք անտէ պիր էսէր պրազ- մագտա, պիր շէյ տօզուլմագտա տըր:

Օլ ֆապրիզաթօր իշիւն մուհիմ սիվալ շու կէշիւրմիշ իտիյիմիզ սէնէ վէ եա սէնէլէրտէ նէ գատար իշլէմիշ օլտուղուլմըզ տէյիլ, իլլա նէ իշ- լէմիշ իտիյիմիզ տիր: Իշլէմիշ իտիյիմիզ շէյին նէ իտիյիստէն թային էտէճէք շէյ իսէ մէքիյիստէն կէշէն թէլլին նէվի տիր, գըլ մը, օթ մը, վէ եա իփէք մի:

Ալլահ իսթէր քի քէնտի իլահի, մուգատտէս թէլինի պիզիմ մէքիյիմիզին — գալպիմիզին ի- չինտէն կէչիրսին վէ պէօյլէճէ հայաթըմըզտա փաք վէ գարիֆ պիր գուճաշ տօգուսուն:

Լաքին եազըզ քի չօզլարըմըզ օլ իլահի թէլին գալպիմիզտէն կէչմէսինէ բազի օլմայըզ, իլա մէքիքլէրիմիզին իչինտէն օթ մէսապէսինտէ օ- լան նէֆս, վէ տիւնեալիլիք թէլլէրինին կէչ- մէսինէ միւսաատէ էտէրիզ, պէօյլէճէ զիզըյմէթ հայաթ տիւնէզիմիզտէ նէֆսանի վէ տիւնեալի, իշէ եարամայան պիր գուճաշ տօգուրուզ: Հայա- թըն հիւսնիւնիւ պօզար, ահէնկինի իլալ է- տէր, վէ անը մազսէտինէ խըտմէթ էթտիրմէյիզ:

Պիր թազըմըմըզ տա հազիզի իփէք եէրինէ սէնաի իփէք գուլլանան քիմսէլէրէ պէնզէրիզ, քէնտի մէքիքլէրիմիզտէն օլ հազիզի, իլահի թէլի կէչիրմէքտէն իսէ անը թազլիթ էտէն պիր թէլ կէչիրմէյէ չալըշըրըզ: Պէլքի պազը քիմ- սէլէրի մուվազպթէն ալտաթմաղա միւսսէտէր տէ օլուրուզ, լաքին նիհայէթ սախթէ իտիլի մէյ- տանա չըգար, հէլէ Ուսթաթ հիշ ալտանմազ: Ալտանմայալըմ պիզ քէնտիմիզի պիլէ ալտա- տամատըղըմըզ հալտէ, Ալլահ ասլա ալտանմազ վէ իսթիհզա օլունմազ:

Իմտի տօսթլարըմ, շու եէնի սէնէնի էշիլինտէ տուրուր իքէն, պիր գաչ տազիզէ իչին իշէ- մէքտէն տուրալըմ վէ պիր տէֆա շիմտիլէ տէք իշէտիլիմիզի կէօզտէն կէչիրէլիմ վէ պազալըմ քի նէ՝ իշէմիշիզ: Սէմալի Ուսթատըն հուզու- րունա չըգարապիլէճէյիմիզ հազիզի պիր գու- մաշ մը՝ եօգսա սախթէ վէ եա եանըպ թէլէֆ օլաճազ օթտան պիր շէյ մի: Իշիմիզին նէ վէ հասըլ պիր շէյ իտիլինի կէօրէպիլմէք վէ թէֆթիշ էտէպիլմէք իչին, անը Ալլահըն բուհունուն վէ քէլամընըն նուրունա կէթիրմէմիզ իճապ էտէր: Չօզ տէֆա իշիմիզին մաթլուպա մուվաֆթըզ օլմամասը անը նէֆսին նուրունտա, գարան- լըզտա իշէմիշ օլտուղըմըզտան տըր:

Պու թէֆթիշ նէթիճէսինտէ էյէր կէօրիւր իսէք քի իշիմիզ Իլահի հուզուրա չըգմաղա լայըզ օլմամըշ տըր վէ եա անտէ գուսուրար վար, եափաճաղըմըզ շէյ մէյուս օլմազ վէ ճէ- սարէթտէն տիւշմէք տէյիլ, իլա իշիմիզի վէ քէնտիմիզի օլ իլահի Ուսթատըն հուզուրունա թազտիմ էթմէք, Անտէն աֆվըզ վէ ինայէթ տիլէմէք վէ միւսաատէ էթմէք քի, Օ պիզիմ մէքիյիմիզին թէլինի տէյիշտիրիպ քէնտի իլահի թէլինի կէչիրսին:

Ամա պունու եափմաղա ասլա թէլլիլի էթ- մէյէլիմ, Ալլահ պիզէ էօմր վէ ֆուրսաթլար վէրիւր իսէ մազսէտի պիզիմ պիր գաչ սէնէ զիյատէ կէօքնէնմէմիզ իչին տէյիլ, իլա պու ֆուրսաթ- լարը ինայէթ չարէսի տէյու պիլէրէք Անըն մազ- սէտինտէ խըտմէթ էթմէմիզ իչին տիր, հայա-

թըմըզն թէլի տահա նէ՝ գատար տէվամ էտէ- ճէյինի պիլիրմիլիզ, օլապիլիւր քի օ թէլ անսը- զըն զըրըսըն վէ մէքիյիմիզ իշէմէքտէն տուր օլուն:

Լիօն

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

ՄԵԿ ԳԻՐ ՄԻԱՅՆ

God is no where — God is now here

Անգլիացի վտանգաւոր Athéist (անաստուած) մը իր խօլ գաղափարներուն մէջ այնքան առաջ գնաց ու իր շուրջը գտնուած անպատկառ խըն- կարկուններէ այնքան շփացաւ որ՝ օր մը իր աշ- խատասենեակին մէջ սեղանին դիմացը պատին վրայ խոշոր տառերով, անգլերէն լեզուով հետեւ- եալ խօսքը գրեց. God is no where (Աստուած չկայ), բառական՝ Աստուած ոչ մի տեղ է:

Այս վերտառութիւնը գինքը անհանգարտ ընող ներքին խղճի ձայնին իբր պատասխան կը գրէր ան, բայց գինքը վրդովող այդ ձայնը ալ աւելի կը զօրանար ու գինքը արմատապէս անհանգիստ կ'ընէր: Օրեր ու ամիսներ կ'անցնէին. իր միտքն ու սիրտը չարչարող աստուածային ձայնը անտա- նիլի եղած էր այլեւս, գիտէր իր ընթացքին սխալ ըլլալը, բայց դառնալ ու Աստուծոյ հնազանդիլ ի- րեն հպարտութեանը չէր կրնար կլկեցնել:

Ձեռքն առաւ տարիներէ ի վեր իր քննադա- տութեանց առարկայ եղող Աստուածաշունչը՝ փնտռելով գլուխ մըն ալ զայն խծքեղու համար, ու երբ այս ու այն կողմ կը թերթատէր իր քմահաճոյքին խաղալիք դարձուցած այդ Գիրքը, յանկարծ հանդիպեցաւ ճրդ Սաղմոսին — փառա- լոր Սաղմոսին — որ կը սկսէր հետեւեալ խօսքե- րով «Ով Տէր մեր Տէրը ի՞նչ փառաւոր է քու անունդ- բոլոր երկրի վրայ որ քու փառքը երկինքներէն վեր դիր. մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր»:

Ի՞նչ, մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատարե՞լ: Դա՛ մի նորութիւն է ինձ համար. ուստի իմ մանուկս հիմակուրէն վարժե- ցընելու են Աստուծոյ գովութիւն չկատարելու համար: Ձանգակը հնչեցուց եւ ճիշդ դպրոցէն տուն վերադարձող 7 տարեկան տղեկը ներս կան- չեց, զայն վարժեցնելու համար:

Հօրը ներքին պայքարներուն անգիտակ մա- նուկն ուրախութեամբ ցատկոտելով ներս կը մըտ- նէր եւ հօրը բարի իրիկունի համբոյրը տալով կը պատմէր թէ դպրոցին մէջ այդ օրը ինչե՞ր սոր- ված էր:

— Շատ լաւ, քա՛ջ տղաս,

Եւ ճիշդ ատոր համար կանչեցի զքեզ քիչ մը քննելու, ուստի կարդա՛ր քաջաբար սա պատին վրայի գրութիւնը: Տղան նայեցաւ գրութեան եւ գիր կապելէ յետոյ, բարձր ձայնով, հայրիկ, God is now here. Հայրը կարծես խթանի հանդիպած վեր վեր նետուեցաւ իր թիկնաթոռին մէջ եւ որդուն ըղորովին անձանօթ անհաճոյ ձայնով մը բացազանչեց: Ի՞նչ, ի՞նչ, սխալ է. շիտակ կարդա, շիտա՛կ կարդա: Անմեղուկ տղեկը իր առաջին քննութեան փորձին անյաշողութենէն կարմրած աչքերը չորս բացած, սկսաւ դարձեալ կարդալ. God is now here. Մխա՛լ, դուն լաւ սորված չես, դուն պարապ տեղը դարոց կ'երթաս, պոռաց հայրը, պրկուած, կոկորդէն ելած խեղդուկ ձայնով մը. քու վարժուհիդ արժանի չէ վարժուհի կոչուելու, եթէ այսքան ամիսներու ընթացքին այս խօսքը կարդալու չափքան չսորվեցուց քեզի: Ու հօրը ձայնը երթալով աւելի կը խռպտէր:

Հայրիկ, դոչեց մանկիկը սիրուն ու զղջուն ձայնով. «Մի բարկանար վարժուհիիս, անիկա, շատ ազնիւ է, միայն իմս է յանցանքը երբ ես չեմ կրնար կարդալ, բայց հայրի՛կ անգամ մըն ալ պիտի փորձեմ»: — Փորձէ՛ տղաս, կ'ըսէր հայրը կարծես մեծ բեռնէ մը ազատուածի պէս հանդարտելով, ու եթէ շիտակ կարդաս համբոյր մը պիտի ընդունիս հայրիկէն, դուն հայրիկիդ արժանաւոր որդին ես: Պահ մը լռութիւն տիրեց: Տղան կը ճզնէր: Երկու րոպէ հազիւ անցած էր, մինչդեռ հօրը համար տարիի պէս կուզար. վասն զի այնքան սարսափելի ու աննախընթաց էին իր ներքին զսպուած կոնքերը. . . : Տարիներէ ի վեր իր սրտին մէջ շինուած անհաւատական անառիկ բերդը որդիին մեղմ ձայնին առջեւ դըղըրդի կ'սկսէր. ամբողջ պատերուն ճարճատուտի ձայները կարծես կը լսէր ան: Վերջապէս տղան բաւական լռութենէ յետոյ հաստատ ձայնով մը բացազանչեց: Հայրիկ God is now here. (Աստուած հիմա հոս է): Մեր վարժուհին ալ անցեալ օր մեզի պատմեց թէ Աստուած միշտ. ամէն տեղ է: Հայրը անպատասխանի մնաց, անոր աչքերուն առջեւ մթնցած էր: Ինչ որ շատ մը պաշտօնակիցներ իրենց փիլիսոփայութեամբը, գիրքերովն ու քարոզներովը չէին յաջողած, իր անմեղ որդին՝ անեղ սրտէն ըզլիւած խօսքով մը կը հաստատէր թէ Աստուած իրաւ հոս էր:

Հայրը գրկեց իր որդին, համբուրեց զայն եւ աչքերը վեր վերցնելով՝ զոհացաւ փառաց Տիրոջը, որ մանկանց ու կաթնիկեր տղայոց բերնէն գովութիւն կը կատարէր: Սեղանին վրայի վերտառութիւնը շտկեց օ գիրը քիչ մը մօտեցնելով ոտին եւ անկէ վերջ իր գրիչը շարժեց Քրիստոսի համար:

ՄՏԵՐԻՄ ԽՕՍՔԵՐ

Ս Ի Բ Ե Լ Ի Ս ,

«Բանբեր»ի այս 9 ամսուան շրջանին իբր խմբագրական մարմին՝ շատ ուրախութիւններ վայելած ենք քու ջանքերուդ եւ քաջալերական խօսքերուդ համար: Մեր նպատակը եղած է ո՛չ նիւթական վարձատրութեան համար աշխատիլ, այլ հոգեկան ու բարոյական. ու մենք վստահ ենք որ դու եւս մեզի խնդակից ես որ այս վարձատրութիւնը արդէն մասամբ կ'ընդունինք, սակայն աւելին ալ կ'սպասենք եւ կ'աղօթենք անոր համար:

Գիտենք թէ դու եւս պիտի փափաքէիր ձեռքդ եկածն ընել «Բանբեր»ի ընթերցողներ աւելցնելու եւ հոգեկան վարձատրութիւններ վայելելու համար:

Արդ ի քաջալերութիւն կ'ըսենք թէ «Բանբեր» 17 զանազան երկիրներու մէջ, 1100ի մօտ բաժանորդներ ունի արդէն:

Իսկ քու ձեռքէդ եկածն է.

1) Պատիկ գոհողութիւնով մը մէկ բարեկամիդ նոր տարուան առթիւ ամէն ամիս քու բարեկամական սէրդ յիշեցնող նուէր մը ղրկել, այս նուէրը «Բանբեր»ը կրնայ ըլլալ:

2) Ուրիշները հետաքրքրել «Բանբեր»ի մասին եւ համոզել զանոնք բաժանորդագրուելու:

3) Կարդալ չգիտցողի մը մեծ ծառայութիւն մը մատուցանել անոր կարդալով «Բանբեր»էն կտորներ:

4) Աղօթել որ «Բանբեր» հոգիներու ծառայէ եւ անոնց օգտակար ըլլայ:

Քու աղօթքներուդ կարօտ եղբայրներդ

ԺՕԶ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ՅՈՎ. Զ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Լիօն

Մարտիլ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հոգեւոր գործը Պուէնոս-Այրէսի մէջ. — Հինգ հազարէ աւելի հայ բնակիչներ պարունակող այս մեծ մայրաքաղաքին մէջ, դեռ երկու տարի առաջ ու եւ է հոգեւոր գործ սկսած չէր: Տարիներ առաջ հոն գաղթող հարուստ կամ աղքատ հայեր Աստուածապաշտութիւնը մոռնալով հանդերձ զԱստուած իրենց մտքին մէջ պահելու արժանի չէին տեսած եւ կարծես հեթանոսական վիճակի մը մէջ միարժեք էին: Քանի մը տարի առաջ հոս հասնող հոգեւորներ իսկ՝ Բրիտանոսի պարտէզին մէջ ու մանց կեանքի եւ ուրիշներու մահուան համար անուշահոտ վարդերը ըլլալու տեղ, աշխարհի հովերէն տարուբերած մերկ ու անպտուղ, երկու անգամ մեռածներու եւ արմատէն խլուած ծառերու կը նմանէին: Ինչ ցաւալի վիճակ էր այս:

Այս ցաւալի վիճակին դեղ ու դարման միայն գործին տէրը կրնար տալ: Այսպիսի մեծ լեռան մը առաջ Զօրաբաբել մը պէտք էր: Գիտէինք թէ զօրութիւնով եւ ոյժով չէր հապա գանոնք համոզել կրցողը միայն Աստուծոյ հոգին պիտի ըլլար: Շատ մը աղօթքներէ եւ խորհրդածութիւններէ վերջ քանի մը հոգեւոր եղբայրներով Աստուծային առաջնորդութեամբ պաշտամունքի մը սկսանք, լուր տալով բոլոր անոնց, որոնք զմեզ կը ճանչնային եւ զորոնք արդէն կ'այցեւէինք: Շատեր եկան եւ Աստուծոյ խօսքը լսելու սկսան: Գործը հետզհետէ մեծցաւ: Շատեր զիղջի գալով Տէր Յիսուս Բրիտանոսը ընդունեցին իբր իրենց անձնական փրկիչը: Ուրիշներ սակայն հայհոյութիւնով եւ հակաճառութիւններով շփոթութիւն յարուցին:

Այս բոլոր պարագաներու՝ Աստուծոյ Աւետարանը մեծ հակառակութեանց մէջ աներկիւղ յառաջ տանող Պօղոսը չէինք կրնար մոռնալ: Բիչ վերջը թուրքիայէն հասնող քանի մը հոգեւոր եղբայրներ մեզի հետ միանալով Աստուծոյ գործին մէջ մեզի զօրավիգ եղան: Երբ որ Շիդա ու Տիմոթէոս Մակեդոնիայէն Կորնթոս գալով Պօղոսի միացան, ան, բոլոր Հրեաներու առջեւ քաջաբար սկսեց վկայել Յիսուսի Բրիտանոս ըլլալը: Մենք ալ Տէրջը տուած լոյսին ու զօրութեանը համաձայն ձեռնարկած գործերնիս յառաջ տարինք: Օտար եկեղեցիներու հետ բանակցութեան մտնելով, ա-

նոնց եկեղեցիներէն մին խնդրեցինք մեզ մի քանի ժամուան համար տրամադրել: Մեթոտական եւ Մկրտչական եկեղեցիները այս մասին սիրով ձեռնտու եղան մեզի:

Տարի մը առաջ Պրն. Հրանտ Ապաճեան Սուրիայէն հոս գալով մեզի մեծ օրհնութեանց պատճառ եղաւ: Իբր հոգեւոր քարոզիչ մը ամէն ջանք ի գործ դրաւ սիրով միացնելու բոլոր Աստուծոյ խօսքը սիրողները: Կիրակի օր չորս գատ տեղերու մէջ պաշտամունքներ տեղի կ'ունենան, իսկ շաբաթամիջին երկու անգամ: Խարբերդցիներու եւ բոլոր հայախօսներու համար զատէն հայերէն պաշտամունքներ կը կատարենք:

Ներկայիս 70ի չափ հոգեւոր եղբայրներու եւ քոյրերու մէջ գործը յառաջ կ'երթայ:

Մարանաթայի եւ Բանբերի նման հոգեւոր թերթերը, մեր տրամած սրտերը ուրախութեամբ լեցրնող եւ ովկիանոսի անդիի կողմէ Աստուծային պատգամները մինչեւ այս կողմեր հասցնող արեւի ճառագայթներու կը նմանին. . . : Անոնց խմբագիրներուն համար կ'աղօթենք որ Տէրը զանոնք իր փառքին համար գործածէ . . . :

Կը խնդրենք որ «Բանբեր» թերթը ընթերցողները այս կարեւոր գործին համար մեզի հետ պատերազմակից ըլլան. . . վասն զի ամէն բան Անկէ, Անով եւ Անոր համար են, Իրեն փառք յաւիտեանս: Ամէն:

Տէրոջմով Ձեր եղբայրը
ՆԱԶԱՐԷԹ ՍԱԼԻՊԵԱՆ

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Նոր լոյս տեսաւ

«ԳՐԱՄԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ»ը

Դին 10 ֆրանք

Դիմել՝ Ա. ԵՐԷՑԵԱՆ, Մարսէլ

Տպագր. Ա. ԵՐԷՑԵԱՆ

40, Բի. տէ Տօմինիքէն. Մարսէլ